

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում
գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ
արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ
տեղեկատվական բազա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 275-Ն որոշման հավելված N1-ի 107-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված է 2019-2022 թվականներին իրականացնել մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների գույքագրում: Աշխատանքների արդյունավետ և նպատակային իրականացման համար բնապահպանության նախարարության ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության բնագավառի մասնագիտացված ստորաբաժանումը 2018 թվականին ձեռնամուխ է եղել մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծմանը: Նշված աշխատանքների կատարումը սահմանված է նաև ՀՀ կառավարության նիստի 22.02.2018թ.-ի N 7 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած բնական պաշարների կառավարման հայեցակարգով, ամրագրված է հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկում:

Շրջակա միջավայրի վրա անմիջական ազդեցություն ունեցող տնտեսության ճյուղերից է լեռնահանքային արդյունաբերությունը: ՀՀ տնտեսության նշանակալից բաղադրիչ են պղնձի, պղինձ-մոլիբդենային, բազմամետաղային և ազնիվ մետաղների վերամշակումն ու հարստացումն իրականացնող ձեռնարկությունները և կոմբինատները, ինչպիսիք են օրինակ՝ Քաջարանի, Կապանի, Ալավերդու, Ախթալայի, Արարատի և այլն:

Մետաղների վերամշակման (այդ թվում՝ մանրացման, աղացման, չափային տեսակավորման, հարստացման և այլ ֆիզիկաքիմիական տեխնոլոգիաների կիրառման) պինդ կամ կիսահեղուկ արգասիքները պահեստավորվում են հիմնականում պոչամբարներում: Ներկայումս ՀՀ տարածքում առկա է մոտ 365մլն.մ³ փաստացի ծավալով 23 պոչամբար, որոնք գտնվում են Լոռու, Սյունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում: Նշված 23 պոչամբարներից

11-ը կոնսերվացված են: Կոնսերվացված պոչամբարները գտնվում են ՀՀ Սյունիքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Դրանց փաստացի ծավալը նախնական տվյալներով կազմում է շուրջ 30 մլն.մ³:

Բացի այդ, մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման արդյունքում ձևավորվել են արտադրական լցակույտեր, որտեղ կուտակված են հանքամարմինները կողքերից պարփակող և վրայից ծածկող, ինչպես նաև հանքամարմինների սահմաններում գտնվող դատարկ ապարներ և ոչ հաշվեկշռային պաշարներին դասվող օգտակար հանածոներ:

2016թ.-ի հոկտեմբերի 18-ին ընդունվել է «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-161 օրենքը, ինչի արդյունքում կանոնակարգվել են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ու վերամշակման բնագավառի իրավահարաբերությունները:

Մինչ նշված օրենքի ընդունումը «ընդերքօգտագործման թափոններ» հասկացությունը սահմանված չէր, տարանջատված չէին ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարման ոլորտում ՀՀ պետական կառավարման մարմինների և ընդերքօգտագործողների պարտավորություններն ու իրավասությունները: Վերնոշյալ օրենքի ընդունմամբ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.10 հոդվածում ամրագրվել է, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է ընդերքօգտագործման թափոնների փակված (այդ թվում՝ լքված) օբյեկտների գույքագրումը, ինչի նապատակով մշակվել և ՀՀ կառավարության 06.07.2017թ.-ի N 774-Ն որոշմամբ հաստատվել է ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը: Համաձայն հաստատված կարգի, գույքագրման ընթացքում նախատեսվում է իրականացնել ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների տարածքում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի որոշում, շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում և մշակել աղտոտվածության նվազեցման, չեզոքացման կամ վերացման միջոցառումներ:

Նշված աշխատանքները սկսելու համար անհրաժեշտ է ստեղծել համապարփակ տեղեկատվական բազա ՀՀ տարածքում առկա ընդերքօգտագործման

թափոնների և թափոնների օբյեկտների վերաբերյալ: Որպես առաջնային, 2018 թվականի ընթացքում նախատեսվում է կազմել մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ արտադրական լցակույտերի, թափոնների փակված օբյեկտներին վերաբերվող տեղեկատվական բազան:

Եռամսյակային կտրվածքով 2018 թվականին նախատեսվող աշխատանքները բաշխվել են հետևյալ կերպ. I եռամսյակ՝ Լոռու և Արագածոտնի մարզեր, II եռամսյակ՝ Արարատի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզեր, III եռամսյակ՝ Վայոց ձորի և Սյունիքի մարզեր:

Ստորև ներկայացվում է ֆոնդային և հրատարակված նյութերի (հաշվետվությունների), ինչպես նաև դաշտային տեղագնումների արդյունքում ստացված մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ արտադրական լցակույտերի, թափոնների փակված օբյեկտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունն ըստ մարզերի:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

Լոռու մարզում դաշտային ուսումնասիրություններ են կատարվել թվով 7 լքված արտադրական լցակույտերի տեղամասերի և 1 ընդերքագտործման թափոնների փակված օբյեկտի տարածքում (նկար 1): Դրանք են.

- ✓ Ընդերքագտործման թափոնների փակված օբյեկտ
- 1. Նազիկ փակված պոչամբար
- ✓ Ընդերքագտործման թափոնների լքված արտադրական լցակույտերի տեղամասեր
- 1. Տանձուտի
- 2. Ալավերդու
- 3. Շամլուղի
- 4. Ֆիոլետովոյի
- 5. Հագվիի
- 6. Հանքաձորի
- 7. Ախթալայի:

ԼՈՌԻ ՄԱՐԶ

LORI MARZ

Մարզկենտրոնը ՎԱՆԱԶՈՐ
8 քաղաք, 122 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 489կմ




Մուսաելյան 8
Musaelian

Գյումրի 28
Gyumri

Գյումրի 30
Gyumri

VANADZOR the center
8 cities 122 settlements
Instate roads 489km



Նկար 1.

ՆԱԶԻԿ ՊՈՉԱՄԲԱՐ (Լ- 1)


Նազիկ պոչամբարը «Ախթալայի ԼՀԿ» ՓԲ ընկերության երեք պոչամբարներից մեկն է, որը գտնվում է կոմբինատից 0.5 կմ հեռավորության վրա՝ Նազիկ գետի հովտում (նկար 2 և 3, լուսանկարներ):

Ախթալայի լեռնահարստացուցիչ ֆաբրիկան գործել է 1967-1988 թվականներին: Ֆաբրիկայում վերամշակվում էին Շամլուղի հանքավայրի պղինձ պարունակող և Ախթալայի բազմամետաղային հանքավայրի հանքաքարերը: Ֆաբրիկայի աշխատանքը դադարեցվեց ԽՍՀՄ ՄԽ 01.07.1989թ. N66/317 որոշման համաձայն:

2001թ. «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մշակվեց և իրականացվեց Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկայի վերագործարկման նոր նախագիծը, համաձայն ինչի ներկայումս «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում վերամշակվում են միայն Շամլուղի հանքավայրի պղինձ-կոլչեդանային հանքաքարերը:



Նկար 2.



Նկար 3.





Նազիկ պոչամբարի մի մասը ժամանակին տեղափոխվել է Ալավերդու պղնձաձուլական կոմբինատ և օգտագործվել որպես խարամ: Պոչամբարի սահմանները որոշված են ըստ գոյություն ունեցող ճանապարհի (դեպի «Սարահարթ» թաղամաս) և Նազիկ գետի առաջին ձորի տարածքի՝ ոչ ջրասուզման պայմանով:

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների պոչամբարը տիդմալիցքային է: Պոչամբարի մակերեսը մոտ 2 հա է: Պոչամբարի նախագծային հզորությունը կազմում է 0.5 մլն.մ³, լցված է 0.4 մլն.մ³: Պոչամբարը կոնսերվացվել էր 1988թ.-ին, սակայն 2000-ականներին վերագործարկվել և կրկին անգամ կոնսերվացվել է 2010թ.-ին:

Պատվարի շինարարական նյութերը կավավազային են: Պոչամբարի պատվարի բարձրությունը 40 մ է, պոչամբարի լցման ձևը՝ թեք գերանակապ:

Պոչամբարի մակերևույթը ռեկուլտիվացված է և ծածկված է բուսականությամբ:

Համաձայն դաշտային դիտարկումների տվյալների, պոչամբարի ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարված են ոչ լիարժեք, պոչամբարի պատվարը ենթարկված է էրոզիայի, դրանում կուտակված ընդերքօգտագործման թափոնների մեկուսացումը ապահով չէ: Զրիեռացման համակարգը բացակայում է:

Պոչամբարի մակերեսի ոչ բավարար մեկուսացման պատճառով մթնոլորտային տեղումները ներծծվում են, դուրս են գալիս պատվարի հատակային մասից դրենաժային հոսքաջրերի տեսքով և տարածվում են ռելիեֆով և թափվում Ախթալա գետը:

Համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների, Նազիկ փակված պոչամբարը հաշվառված է «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ հաշվեկշռում:

ՏԱՆՁՈՒՏԻ ՏԵՂԱՄԱՍ (Լ- 2)

Տանձուտ տեղամասի ընդերքօգտագործման թափոններն առաջացել են Տանձուտի ծծումբ-կոլչեդանային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և շահագործման աշխատանքների արդյունքում:

Տանձուտի տեղամասում առկա են ընդերքօգտագործման թափոնների լցակայանների 3 առանձին տարածքներ (նկար 4 և 5, լուսանկարներ):

Տանձուտի հանքավայրը գտնվում է Վանաձոր քաղաքից 14կմ հեռավորության վրա՝ Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջին, Տանձուտ գետի վերին հոսանքում: Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը - Անտառաշեն գյուղից մոտ 2կմ արևմուտք, հյուսիս-արևմուտք, Լերմոնտովո գյուղից մոտ 2.5կմ արևմուտք:

Տանձուտի ծծումբ-կոլչեդանային հանքավայրը հայտնաբերվել է 19-րդ դարի վերջին, շահագործվել է «Տանձուտ», այնուհետև՝ «Նոբել եղբայրներ» ընկերությունների կողմից: 1925-26թթ.-ի հանքաքարի զգալի պաշարներ է արտահանվել Բաքու:



Նկար 4.

1930-33թթ.-ին Հայաստանի երկրաբանական վարչության կողմից կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով՝ հաստատվել են հանքավայրի երեք ոսպնյակաձև մարմինների հանքաքարի պաշարները ըստ A+B+C₁ կարգերի 856330 տ քանակությամբ:

Այդ ժամանակահատվածում հանքավայրը շահագործվել է բաց եղանակով, ամենահարուստ տեղերից և հանքավայրից մեծ քանակությամբ ծծումբ-կոլչեդանային հանքաքար է արդյունահանվել: Հանքավայրում կառուցվել է փոքր հարստացուցիչ ֆաբրիկա: Ներկայումս պահպանվել են հարստացուցիչ ֆաբրիկայի և օժանդակ կառույցների ավերակները:

1933-1951թթ.-ին Տանձուտի հանքավայրը կոնսերվացվել է:

1951թ.-ին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները վերսկսվել են հանքավայրին հարակից նոր տեղամասերում՝ Անդրանիկի-բարի-ջուր և Տանձուտ գետի միջին հոսանքում:

1954-1955թթ.-ին և 1958թ.-ին հանքավայրում կատարվել են վերստուգիչ-հետախուզական աշխատանքներ, որի արդյունքում վերագնահատվել են ցրված և հազվագյուտ տարրերի պաշարները: Այս փուլի աշխատանքների արդյունքներով հանքաքարի պաշարները վերահաստատվել են ըստ A+B+C₁+C₂ կարգերի 2229850տ. քանակությամբ, հաշվարկվել են սելենի 131.1տ և թելուրի 46.7տ պաշարներ:

1959թ.-ին ուսումնասիրվել է Տանձուտի հանքավայրի օքսիդացման գոտին և ՀՄՄՀ երկրաբանական վարչության ՊՏՀ-ի կողմից ըստ A+B+C₁ կարգերի հաստատվել են հանքային ներկերի 211430.6հազ.տ պաշարներ:

Սկսած 1953 թվականից, ընդհատումներով կատարվել են հանքավայրի տարածքի ոսկեբերության հեռանկարների ուսումնասիրության աշխատանքներ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կատարվել են ստորգետնյա լեռնային փորվածքների և հորատանցքերի կիրառմամբ:

1992-2004թթ.-ին Տանձուտի հանքավայրի լրահետախուզման աշխատանքներն իրականացվել են «Վալեքս Մայնինգ» ՍՊԸ կողմից, ինչի արդյունքում հանքավայրում հաշվարկվել և ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից ըստ C₁+C₂ կարգերի հաստատվել են 367.3 հազ.տ հանքաքարի, 475.5կգ ոսկու և 4.41տ արծաթի պաշարներ:

Հանքավայրի օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման նպատակով հանքավայրի տնտեսական յուրացման ողջ շրջանում

կատարվել է շուրջ 1970 գծ.մ ստորգետնյա և ավելի քան 4000մ³ մակերևութային լեռնային փորվածքների անցում:

01.04.2018թ.-ի դրությամբ Տանձուտի ծծումբ-կոլչեդանային հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրագուրկ/լքված:





Լցակույտերի տարածք 1

10/APR/2018



Լցակույտերի տարածք 1

10/APR/2018



Լցակույտերի տարածք 2

10/APR/2018



Լցակույտերի տարածք 3



Լցակույտերի տարածք 3



Լցակույտերի տարածք 3

Ալավերդու (Մադանի) տեղամաս (Լ- 3)

Ալավերդու (Մադան) տեղամասի ընդերքօգտագործման թափոնները ձևավորվել են Ալավերդու պղնձի հանքավայրի ավելի քան 250 տարվա երկրաբանական ուսումնասիրության և շահագործման արդյունքում և ներկայացված են ստորգետնյա լեռնային փորվածքների անցման և հանքաքարից մետաղի կորզման արդյունքում առաջացած լցակույտերով, ինչպես նաև Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատի գործունեության հետևանքով առաջացած արտադրական մկնդեղի թափոններով: Ալավերդու պղնձի հանքավայրի հումքային հենքի վրա գործել է Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատը:


Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը - Ալավերդի քաղաքից մոտ 2,5կմ հյուսիս, Լեռնահանք (նախկինում՝ Մադան, Լենտուղնիկ) գյուղից արևմուտք՝ հարակից տարածք (նկար 6 և 7, լուսանկարներ):

Ալավերդու պղնձի հանքավայրի արդյունաբերական մասշտաբներով յուրացումը սկսվել է դեռևս 1770 թվականից՝ «Մանես» պղնձաձուլարանի հիմնադրման ժամանակից: «Մանես» ընկերությունը հանքավայրը շահագործել է մինչև 1944 թվականը՝ արդյունահանելով բարձր պարունակություններով օժտված «առաջին հանքաբեր հորիզոնի» հանքաքարերը: 1944թ.-ին՝ արտադրական վթարի և գործող հանքի ջրողողման պատճառով, հանքաքարի արդյունահանումը դադարեցվել է:


Ալավերդու պղնձի հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները վերսկսվել են 1955թ.-ին, երբ բացահայտվել է ստորին հանքաբեր հորիզոնի երակային տիպի հանքայնացումը:

1980թ.-ին ԽՍՀՄ ՊՊՀ 26.09.1980թ.-ի N8596 արձանագրությամբ Ալավերդու հանքավայրի տարածքում հաստատվել են հանքաքարի 4805.8հազ.տ և 134.6հազ.տ պղնձի պաշարներ: 1994թ.-ին՝ անվտանգության նկատառումներից ելնելով, ստորգետնյա փորվածքների հիմնական հորիզոնները կոնսերվացվել են:


2001-2003թթ.-ին «Էյ-Սի-Փի» ՓԲ ընկերության կողմից վերականգնվել է ավելի քան 4000զձ.մ և անցվել է շուրջ 1500զձ.մ ստորգետնյա փորվածքներ, կատարվել է հանքավայրի պաշարների վերագնահատում, հանքավայրի վերագնահատված պաշարները կազմել են 1268.0հազ.տ հանքաքար և 66234.7տ պղինձ:



Նկար 6.



Նկար 7.







23.03.2004թ.-ին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությունը ստացել է Ալավերդու պղնձի հանքավայրի շահագործման ՀԱ-Լ-14/89 լիցենզիան, որը վերաձևակերպել է 20.02.2013թ.-ին՝ ստանալով ընդերքօգտագործման թույլտվություն N 29/393 (գործողության ժամկետը մինչ 2026 թվականի օգոստոսի 6-ը): Համաձայն թույլտվության և ընդերքօգտագործման N ՊՎ-393 պայմանագրի «Արմենիան Քափըր

Փրոգրամ» ՓԲԸ-ին մարման համար տրամադրվել են 5-րդ բովանգքից վերև և ներքև զտնվող տեղամասերի 1196.0 հազ.տ C₁+C₂ կարգի պաշարները:

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության 18.11.2005թ.-ի ԲՓ-126 եզրակացության՝ Ալավերդու պղնձի հանքավայրի շահագործման ընթացքում բնապահպանական միջոցառումներից նախատեսված է դատարկ ապարների լցակույտի (23830.մ³ քանակությամբ) տարածքի (6200ք.մ.) ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիայի համար անհրաժեշտ բուսահողը տեղափոխվելու է Մադան թաղամասից: Համաձայն N 29/393 ընդերքօգտագործման թույլտվության ընկերությունը պարտավորվում էր շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին հատկացնել 2109.6հազ. դրամ, ինչը վճարվել է: Ռեկուլտիվացիոն աշխատանքներ լցակույտի տարածքում իրականացված չեն:

07.10.2014թ.-ին «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ տեղեկացրել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը՝ ընդերքօգտագործման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ: ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 20.03.2015թ.-ի N 39-Ա հրամանով «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲ ընկերությանը տրամադրվել է հանքային իրավունքի օբյեկտ համարվող տեղամասից հրաժարման N 26 հավաստագիրը, որը ուժի մեջ է մտել 08.01.2015թ.-ից:

01.04.2018թ.-ի դրությամբ հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրազուրկ/լքված:

Շամլուղ տեղամաս (Լ- 4)

Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը՝ Շամլուղ գյուղից հյուսիս-արևելք, հարակից տարածք (նկար 8 և 9, լուսանկարներ):

Շամլուղի պղինձ-կոլչեդանային (պղինձ-հրաքարային) հանքավայրը գտնվում է Շամլուղ քաղաքի մոտ, Ախթալա գետի ավազանում, Ախթալայի կայարանից մոտ 5կմ և Ալավերդի քաղաքից 28կմ հեռավորության վրա: Շամլուղի հանքավայրի հումքային հենքի վրա գործում է Ալավերդու հարստացուցիչ ֆաբրիկայում:

Շամլուղի տեղամասի ընդերքօգտագործման թափոններն առաջացել են համանուն հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և շահագործման աշխատանքների արդյունքում:

Ինչպես և Ալավերդու պղնձի հանքավայրը, Շամլուղի հանքավայրում հանքաքարի արդյունահանման աշխատանքները սկսվել են 1741-42-ական թվականներից, համակարգված երկրաբանական ուսումնասիրության, այդ թվում նաև շահագործական հետախուզական աշխատանքները՝ 1917թ.-ից և ընդհատումներով շարունակվել մինչև 1990թ.-ը:

Հանքավայրում հանքաքարի արդյունահանման աշխատանքների իրականացման համար անցվել է ավելի քան 112կմ ստորգետնյա լեռնային փորվածք:


Շամլուղի հանքավայրը շահագործվում է «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ կողմից՝ 2012 թվականի հոկտեմբերի 20-ի ՇԱԹՎ-29/103 արդյունահանման թույլտվության գործողության ժամկետ է սահմանված 2022 թվականի նոյեմբերի 4-ը: Ընկերությունը հանքավայրը շահագործում է համակցված՝ ստորգետնյա և բաց եղանակներով: Բացահանքով շահագործման համար են տրամադրվել հանքավայրի 1090մ հորիզոնից վերև՝ 396694.8 հանքաքարի հաշվեկշռային պաշարները, ընդ որում շահագործման 100.0հազ.տ հանքաքարի տարեկան արտադրողականությունից 75.0հազ.տ վերապահվել է բացահանքին, իսկ 25.0 հազ.տ՝ ստորգետնյա հանքին: Ընդերքօգտագործման պայմանագրին համաձայն ընկերությունը խախտված հողերի վերականգնման նպատակով նախատեսում է 2016-2021թթ.-ի ընթացքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացնել 190981,50 հազ.դրամ գումար, այդ թվում՝ 2016թ.-ին 26388,0 հազ.դրամ, 2017-2021թթ.-ին 31466,0հազ.դրամ տարեկան:

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ իրականացրել է Շամլուղի հանքավայրի պաշարների վերագնահատում: Հաստատվել են հանքավայրի շահագործական կոնդիցիաները, հանքաքարի ու մետաղների պաշարները 01.01.2015թ.-ի դրությամբ (ՀՀ ԷԵԲՊՆ աշխատակազմի 30.09.2017թ.-ի N 8 եզրակացության):

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ ՀՀ բնապահպանության նախարարություն է ներկայացրել Շամլուղի հանքավայրի օգտակար հանածոյի ստորգետնյա եղանակով արդյունահանման գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, ինչով նախատեսվում է իրականացնել գործող ստորգետնյա հանքի վերազինում՝ հասցնելով դրա արտադրողականությունը մինչև 500հազ.տ/տարի: Նախնական գնահատման հայտի հիման վրա ընկերությանը 04.04.18թ.-ին տրվել է SU-19 տեխնիկական առաջադրանքը: Ներկայումս շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլում է գտնվում «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ ներկայացված Շամլուղի պղնձի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման նոր նախագիծը, համաձայն ինչի օգտակար հանածոյի արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի իրականացման համար օգտագործվելու են հետևյալ ստորգետնյա փորվածքները. NN1, 2 և 3 կապիտալ բովանգքները, NN 6, 15, 21, 31, 32, 34, 36, 37, Օդափոխման և Տրանսպորտային բովանգքները:

Համաձայն «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ ներկայացված արդյունահանման նախագծի՝ հանքաքարի վերամշակման արդյունքում առաջացող պոչերը փուլ-առ-փուլ տեղադրվելու են նախկինում շահագործված բացահանքի տարածքում և ծածկվելու են մակաբացման ապարների շերտով: Նախատեսվում է իրականացնել նաև «Նահատակ» պոչամբարի ռեկուլտիվացիա, ինչի նպատակով նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացնել շուրջ 21.63 մլն.դրամ:

Նախագծով չի արժարժվում նախկին տարիների շահագործման աշխատանքների արդյունքում ձևավորված լցակույտերի ռեկուլտիվացման, այդ աշխատանքների ֆինանսավորման աղբյուրների հարցը:



Նկար 8.



Նկար 9.



Ֆիոլետովոյի տեղամաս (Լ- 5)

Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը - Ֆիոլետովո գյուղից 0,5կմ արևելք, Մարգահովիտ երկաթգծի կայարանից 3,5կմ հյուսիս-արևելք (նկար 10 և 11, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնների առկայությունը պայմանավորված է Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, հանքաքարի փորձնական արդյունահանման աշխատանքներով:


Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրը գտնվում է Մարգահովտի (Համգաչիմանի) հանքային դաշտում, որը ձգված է Աղստև գետի երկայնքով՝ Վանաձոր և Դիլիջան քաղաքների միջև 30-35կմ երկարությամբ, 4կմ լայնությամբ: Հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին կավճի հասակի կրաքարեր, միջին, միջին-վերին եոցենի հրաբխային և հրաբխանստվածքային առաջացումներ: Առանձնանում են հիդրոթերմալ փոփոխված ապարների կտրուկ և փոքր անկումներով զոնաներ:

Մարգահովտի հանքային դաշտում երկրաբանական ուսումնասիրությունները սկսվել են դեռևս մեր թվարկությունից առաջ:

Բուն Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրի կոնդիցիաները և պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ 24.08.2012թ.-ի N 337 որոշմամբ: Մարգահովտի հանքային դաշտի և Ֆիոլետովոյի հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ կիրառվել են մակերևութային և ստորգետնյա լեռնային փորվածքներ: Մասնավորապես, Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրի հանքային մարմիններն ըստ խորության՝ 1653մ հորիզոնում ուսումնասիրվել են ստորգետնյա փորվածքներով՝ թիվ 13 բովանցքով և հանքամիջանցքներով: 01.04.2018թ.-ի դրությամբ Ֆիոլետովոյի ոսկու հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրազուրկ/լքված: Դաշտային ուսումնասիրությունների արդյունքներով փաստվել է, որ լցակույտերի մակերեսները ենթարկվել են բնական ռելիուլտիվացիայի, ծածկվել են խոտածածկով և թփուռներով:



Նկար 10.



Նկար 11.



Հագվի տեղամաս (Լ- 6)

Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը - Հագվի գյուղից մոտ 1.4կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք (նկար 12 և 13, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերն առաջացել են Հագվի պղնձի հանքավայրում մակերեսային և ստորգետնյա լեռնային փորվածքների անցման արդյունքում:

Հագվի պղնձի հանքավայրը գտնվում է Սանահին երկաթգիծ կայարանից 3-4 կմ հեռավորության վրա և Ալավերդու պղնձաձուլարանի գործարանից՝ 8-9 կմ արևմուտք:


Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին յուրայի հասակի պորֆիրիտները, մանրահատիկ կվարցացված տուֆագենային ապարները, ավազաքարերը: Որոշ հատվածներում ուժեղ հիդրոթերմալային փոփոխության արդյունքում պորֆիրիտները և տուֆոգենային ապարները ձևափոխվել են հրակայուն ապարների: Հանքային միներալները ներկայացված են պիրիտով և խալկոպիրիտով, շատ քիչ քանակությամբ հանդիպում են նաև հեմատիտ, սֆալերիտ, գալենիտ, խալկոզին և կոզելին:

Հագվի երկրաբանահետախուզական աշխատանքների 1955թ. և 1959թ. երկրաբանահետախուզական աշխատանքների հաշվետվություններում առկա են տեղեկատվություն նախկինում կատարված երկրաբանական հետախուզական և արդյունահանման աշխատանքների մասին, որոնք հիմնականում կատարվել են լեռնային փորվածքների անցումներով, մասնավորապես՝ բովանգքների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 770 գ.մ.: Հագվի հանքավայրի պաշարները հաստատվել են 1941թ. (483600տ հանքաքար և 5094տ պղինձ) և 1961թ.-ի (հաշվեկշռային պաշարներ՝ 292.3 հազ.տ հանքաքար և 1.71հազ.տ պղինձ, արտահաշվեկշռային պաշարներ՝ 69.1հազ.տ հանքաքար և 0.36հազ.տ պղինձ): Շահագործական հետախուզական, լրահետախուզական աշխատանքներ իրականացվել են 1991-2000թթ.-ի «Էյ Սի Փի» ՍՊԸ կողմից:

01.04.2018թ.-ի դրությամբ Հագվի պղնձի հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրագուրկ/լքված:



Նկար 12.



Նկար 13.



Հանքաձորի տեղամաս (Լ- 7)

Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը – Դեբետ համայնքից մոտ 8-9կմ հարավ, Եղեգնուտ գյուղից մոտ 5-6կմ հարավ, հարավ-արևելք (նկար 14 և 15, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը ձևավորվել են Հանքաձորի-Սիսիմադան հանքային դաշտի Հանքաձորի, Սիսիմադան, Էլիար ուսումնասիրության, օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում կիրառված ստորգետնյա և մակերևութային լեռնային փորվածքների անցման հետևանքով:

Հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են յուրայի, պալեոցեն–ստորին էոցենի, վերին միոցենի հրաբխային և հրաբխանստվածքային առաջացումները: Հանքավայրում պղնձի հանքայնացումը կապվում է յուրայի հասակի ապարների հետ: Հանքաձորի երկրաբանական աշխատանքների ամփոփ 1956-1959թթ. և Հանքաձորի հանքային դաշտի որոնողական և Հանքաձորի պղնձի հանքավայրի կենտրոնական տեղամասում նախնական հետախուզական աշխատանքների 1974թ. հաշվետվությունների համաձայն 19-րդ դարի սկզբում այստեղ գործել են փոքր լեռնահանքարդյունաբերական ձեռնարկություններ: 20-րդ դարի սկզբներին ֆրանսիացիների կողմից միայն Հանքաձոր տեղամասից (Հանքաձորի հանքավայր) ստորերկրյա եղանակով արդյունահանվել է մոտ 150 հազ.տոննա հանքաքար:

Հանքաձոր տեղամասում անցած փորվածքների ընդհանուր երկարությունը կազմել է 8.5կմ: Մինչև 20-րդ դարի կեսերը Հանքաձորի հանքավայրում իրականացվել են երկրաբանահետախուզական և շահագործական աշխատանքներ, որոնց արդյունքում կատարվել է ավելի քան 18000զծ.մ. ստորգետնյա հորիզոնական և 26 զծ.մ ուղղաձիգ, 7696մ³ առուների և խրամների, շուրջ 6000զծ.մ հորերի անցում և ավելի քան 15,8կմ սյունակային հորատում (նկար 17): Հանքավայրի պաշարները հաստատվել են ՀՍՍՀ երկրաբանական վարչության ԳՏԽ որոշմամբ 5651.32 հազ.տ հանքաքար և 92.42հազ.տ պղինձ քանակություններով: 1975թ.-ին հանքավայրը դասվել է պահուսատային հանքավայրերի շարքին:


Էլիարի, Սիսիմադանի, Նազոյի-յուրտ տեղամասերում անցել են ավելի քան 15 հատ բովանգք, մասամբ վերականգնվել են 1890-ական թվականներին



Նկար 14.

Ֆրանսիացիների կողմից անցած հին, փլուզված բովանգքները, ինչի արդյունքում ձևավորվել են ընդերքօգտագործման թափոնների զգալի ծավալներ:

01.04.2018թ.-ի դրությամբ Հանքաձորի հանքավայրը, ինչպես նաև Հանքաձորի հանքային դաշտի այլ տեղամասերը չեն հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ: Տարածքում կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրազուրկ/լքված:



Նկար 15.







Ախթալայի տեղամաս (Լ- 8)

Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը – Ախթալա բնակավայրի մոտ 0.6կմ հյուսիս-հյուսիս-արևելք և մոտ 0.5կմ հյուսիս-արևմուտք (նկար 16 և 17, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը ձևավորվել են Ախթալայի բարիտ-բազմամետաղային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և շահագործման արդյունքում:

Ախթալայի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանումն սկսվել է դեռևս միջնադարում և ընդհատումներով շարունակվել մինչև 1917թ.-ը, ինչի ընթացքում հանքավայրից արդյունահանվել է մոտավորապես 50000տ բազմամետաղային հանքաքար:

1941-1979թ.-ից հետո հանքավայրի ուսումնասիրության և շահագործման աշխատանքները կատարվել են համակարգված և անընդմեջ մինչև 1983թ., երբ հանքավայրը կոնսերվացվել է հանքաքարում մետաղների ցածր պարունակությունների, արտադրության ոչ շահութաբեր լինելու պատճառով:

Վերջին ժամանակաշրջանում, երկրաբանական ուսումնասիրության և հանքաքարի արդյունահանման նպատակով կատարվել է 3452մ³ առուների և խրամների, 60զծ.մ հետախուզահորերի, 6255զծ.մ հորիզոնական և 616զծ.մ. ուղղաձիգ ստորգետնյա լեռնային փորվածքների անցում:

Հանքավայրի պաշարները հաստատվել են 1955թ.-ին հետևյալ քանակություններով. բազմամետաղային հանքաքար 957 հազ.մ³, բարիտային հանքաքար՝ 165հազ.մ³ քանակությամբ:

Հանքավայրի հանքաքարը հումք է հանդիսացել Ախթալայի լեռնահարստացուցիչ և Հյուսիս-Կովկասյան կապար-ցինկի կոմբինատների համար:


01.04.2018թ.-ի դրությամբ հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ: Ստորգետնյա լեռնային փորվածքների՝ բովանգքների սկզբնամասերում, «Նազիկ» պոչամբարից մոտ 300մ դեպի արևմուտք կուտակված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես տիրագուրկ:



Նկար 16.



Նկար 17.



Արագածոտնի մարզ

ՄԻՐԱՔԻ ՏԵՂԱՄԱՍ (ԱԳ-1)

Արագածոտնի մարզում ֆոնդային և հրատարակված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է ընդերքօգտագործման թափոնների մեկ տիրագուրկ լցակույտ՝ Միրաքի տեղամասում (նկար 18-20, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտի տեղադիրքը - Ապարան քաղաքից մոտ 4կմ արևմուտք-հյուսիս-արևմուտք, Միրաք գյուղից 2.5կմ արևելք-հարավ-արևելք): Ընդերքօգտագործման թափոնները ձևավորվել են Թուխմանուկի հանքային դաշտի Միրաքի տեղամասում երկրաբանական ուսումնասիրության նպատակով լեռնային փորվածքների անցման արդյունքում:

Թուխմանուկի հանքային դաշտի Միրաքի տեղամասը գտնվում է Միրաք գյուղից 2.5-3.0կմ հյուսիս-արևելք:

Հանքայնացումը ներփակված է Միրաքի ինտրուզիայի քվարցային դիորիտներում և ապարանի շերտախմբի բազալտ-անդեզիտաբազալտային լավաներում, տուֆափշրաքարերում: Հանքային մարմինները ներկայացված են 100-120մ երկարությամբ և մինչև 0,6մ լայնությամբ քվարց-կարբոնատ-հանքային և քվարց-հանքային երակներով:

Միրաքի տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները, հետախուզական փորվածքների (մակերևութային լեռնային փորվածքներ, հորատում, 60 գծ.մ ստորգետնյա լեռնային փորվածքներ) անցումը կատարվել են 1986-1990թթ., 2008-2012 և 2013-2016թթ.-ին, ընդ որում 2008-2016թթ.-ին հետախուզական աշխատանքները կատարվել են «Մեզո Գոլդ» ՍՊԸ նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ: Միրաք տեղամասում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ՕՀՊԳ-ի պետական ընդերքաբանական փորձաքննության 2016 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 6 եզրակացությամբ հաստատվել են հանքաքարի 345.25հազ.տ, ոսկու 1037.17կգ և արծաթի 3.07տ պաշարներ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով «Մեզո Գոլդ» ՍՊԸ ընկերությունը նախատեսել է խախտված հողատարածքների վերականգնում, որի նպատակով շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին պետք է հատկացվեր 5600հազ.դրամ գումար:


Ներկայումս Միրաքի տեղամասի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունք տրամադրված չէ: Լցակույտերը համարվում են լքված/տիրագուրկ: Դրանց

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ARAGATZOTN MARZ


Մարզկենտրոնը ԱՇՏԱՐԱԿ
3 բաղաբ, 117 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 498կմ

ASHTARAK the center
3 cities 117 settlements
Instate roads 496km




Նկար 18.

ռեկուլտիվացիայի խնդիրները հնարավոր է կարգավորել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին «Մեգո Գոլդ» ՍՊ ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության արդյունքում խախտված հողերի վերականգնման նպատակով նախատեսված հատկացումների գանձման հաշվին:



Նկար 19.



Նկար 20.



Արարատի մարզ

ԽՈՍՐՈՎԻ ՏԵՂԱՄԱՍ (Ա-1)

Արարատի մարզում ֆոնդային և հրատարակված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ընդերքօգտագործման թափոնները կուտակված են Խոսրովի տեղամասում (նկար 21-23, լուսանկարներ):

Խոսրովի տեղամասի ընդերքօգտագործման թափոններն առաջացել են Խոսրովի սնդիկի հանքերնակման տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների և տեխնոլոգիական ուսումնասիրությունների նպատակով՝ հանքաքարի փորձնական արդյունահանման արդյունքում:

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի տեղադիրքը – Ուրցաձոր գյուղից 15կմ, Վեդի քաղաքից 25կմ հեռավորության վրա, Վեդի գետի աջ օժանդակ Խոսրով գետի միջին հոսանքի ավազան:


Տարածքում հանքայնացման հեռանկարների պարզաբանման, հանքաքարի փորձնական արդյունահանման նպատակով անցել են 1670.5 գծ.մ ստորգետնյա լեռնային փորվածքներ, ինչի արդյունքում ձևավորվել են ընդերքօգտագործման թափոնների (ներփակող ապարների խոշորաբեկոր և մանրահատիկ թափվածքներ) լցակույտեր:

Սնդիկի հանքայնացումը ներկայացված է բրեկչիանման, ջարդոտված, կայծքարացված, կարբոնատացված, երկաթի հանքայնացում պարունակող ապարների գոտիների հետ, որոնք տեղակայված են տուրոնի հասակի կրաքարերի և կոնյակի հասակի ավազաքարերի հպակային մասում:

Հանքաքարի միներալային կազմը ներկայացված է կինովարով, խոնացած հանքերով, սֆալերիտով, գալենիտով, խակոպիրիտով, խակոզինով, արսենոպիրիտով:

Տեղամասը չի համարվում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ:


Տեղամասը ներկայանա ներառված է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում:



Նկար 21.



Նկար 22.



Նկար 23.



Գեղարքունիքի մարզ

Գեղարքունիքի մարզում ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոնների լքված լցակույտերի 3 տեղամասեր և 1 փակված պոչամբար (նկար 24):

ՋԻԼԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԴԱՇՏ (Գ-1)

Սևանի հյուսիս-արևելյան ափով ձգվող օֆիոլիտային գոտու ապարներում քրոմի պաշարների հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվել են 1890-ական թվականներից: Ջիլ-Սատանախաչի գաբրո-պերիդոտիտային ինտրուզիվ գանգվածի հյուսիս-արևմտյան հատվածում հայտնաբերվել և ուսումնասիրվել են քրոմի կուտակումներ ներփակող 3 տեղամաս՝ Գլավնայա Ժիլա, Եֆիմովի և Չաթին-Դարայի (նկար 25 և 26, լուսանկարներ):

Գլավնայա Ժիլա տեղամաս

Գլավնայա Ժիլա (Ջիլ) տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը ձևավորվել են ստորգետնյա լեռնային փորվածքների անցման և քրոմիտների արդյունահանման արդյունքում:

Գլավնայա Ժիլա (Ջիլ) քրոմիտների հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ Ջիլ գյուղից 1.5կմ հարավ-արևմուտք:

Հանքավայրը հայտնի է 1899թ.-ից, երկրաբանահետախուզական աշխատանքներն առաջին անգամ իրականացվել են 1924-1925թթ.-ին, հանքաքարի արդյունահանումը՝ սկսած 1937թ.-ից: Հանքավայրի ուսումնասիրության և շահագործման նպատակով կատարվել է 4875խոր.մ մակերևութային, 600մ ստորգետնյա լեռնային փորվածքների անցում, 500զծ.մ հորատում:

Հանքավայրի պաշարները հաստատվել են 1938 թվականին՝ ըստ C₂ արդյունաբերական կարգի 3,0հազ.տ քանակությամբ: 1947-1950թթ.-ին հաստատված պաշարների գերակշիռ մասն արդյունահանվել է: 1959թ.-ին ՀՍՍՀ երկրաբանական վարչության ՊՏՀ որոշմամբ հանքավայրը դիտարկվել է որպես «արդյունաբերական նշանակությունը կորցրած»:



Նկար 25.



Նկար 26.

Եֆիմովո տեղամաս

Եֆիմովո տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը ձևավորվել են ստորգետնյա լեռնային փորվածքների անցման և քրոմիտների արդյունահանման արդյունքում: Տեղամասը գտնվում է Գեղարքունիքի մարզում՝ Ջիլ գյուղից 0,8կմ հարավ-արևելք, Ջիլից Ծափաթաղ տանող ճանապարհի մոտ:

Տեղամասում քրոմի հանքայնացման ուսումնասիրության նպատակով անցել են բովանցք և հանքամիջանցքներ, մակերևութային լեռնային փորվածքներ, կատարվել է հանքաքարի փորձնական արդյունահանում; նախնական գնահատականներով տեղամասում առկա է 1500տ քրոմիտի հանքաքար:

Չաթին-Դարայի տեղամաս

Չաթին-դարայի տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը ձևավորվել են ստորգետնյա լեռնային փորվածքների անցման և քրոմիտների արդյունահանման արդյունքում:

Տեղամասը գտնվում է Եֆիմովո տեղամասի 0,8կմ հարավ-արևելք, նույնանուն ձորակի ձախ ափի վերին հատվածում:

Տեղամասում քրոմի հանքայնացման ուսումնասիրության նպատակով անցել են բովանցքներ և մակերևութային լեռնային փորվածքներ, կատարվել է հանքաքարի փորձնական արդյունահանում; նախնական գնահատականներով տեղամասում առկա է 1150տ քրոմիտի հանքաքար:





Գլավնայա Ժիլ տեղամաս



Եֆիմով տեղամաս



Չարին-Դարայի տեղամաս

ՄՈԹՔ ՏԵՂԱՄԱՍ (Գ-2)

Մոթք տեղամասում գտնվում է ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտ (պոչամբար), որն առաջացել է 1955-1957թթ.-ին Մոթքի ոսկու հանքավայրից արդյունահանված հանքաքարի տեխնոլոգիական հարստացման արդյունքում: Այստեղ էր գտնվում Մոթքի փորձարարական հարստացման արտադրամասը:


Ընդերքօգտագործման թափոնների Մոթք տեղամասը գտնվում է Մոթք գյուղից շուրջ 2 կմ հեռավորության վրա՝ ծովի մակարդակից 2050–2080 մ բարձրության վրա (նկարներ 27 և 28, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտը տիրագուրկ է:



Նկար 27.






Նկար 28.

Կոտայքի մարզ

Կոտայքի մարզում ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի 2 տեղամասեր՝ Հանքավանի և Թեժարի (նկար 29):




Նկար 29.

ՀԱՆՔԱՎԱՆԻ ՏԵՂԱՄԱՍ (Կ-1)

Հանքավանի տեղամասում ընդերքօգտագործման թափոններն առաջացել են Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, XIX դարի ընթացքում և XX դարի սկզբում հանքավայրի անմիջական տարածքում պղինձի տնայնագործական եղանակով արդյունահանման, այնուհետև՝ հանքավայրի պաշարների հաստատման ընթացքում տեխնոլոգիական փորձարկումների նպատակով օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում:

Ընդերքօգտագործման թափոնների տեղադիրքը՝ Մեղրաձոր համայնքի Հանքավան բնակավայրից 0.8-2.5կմ արևմուտք, հյուսիս-արևմուտք (նկարներ 30 և 31, լուսանկարներ):



Նկար 30.

Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի համակարգված ուսումնասիրությունը սկսվել է 1931 թվականից: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքի և հանքայնացման բնույթի պարզաբանման նպատակով հանքավայրի մակերեսը հետախուզվել է 20323մ³ հետախուզաառուներով, 4516զծ.մ հետախուզահորերով, 5 հորիզոններում տեղադրված ավելի քան 12կմ երկարությամբ ստորգետնյա փորվածքներով և 17կմ հորատանցքերով:



Նկար 31.

Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 1962թ.-ի սեպտեմբերի 3749 արձանագրությամբ որպես արտահաշվեկշռային: 2015 թվականին «Գոլդեն Օրե» ՍՊ ընկերությունը իրականացրել է հանքավայրի պաշարների վերագնահատում, որը սակայն ՀՀ ՊՊՀ կողմից չի հաստատվել:

2018 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Հանքավանի պղինձ-մոլիբդենային հանքավայրը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակայանները համարվում են տիրագուրկ/լքված:





ԹԵԺՍԱՐԻ ՏԵՂԱՄԱՍ (Կ-2)


Թեժսարի տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի առաջացումը կապված է Թեժսարի նեֆելինային սիենիտների (այլումինի հումք) հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հումքի արդյունահանման աշխատանքների հետ (նկար 32, լուսանկարներ):

Թեժսարի նեֆելինային սիենիտների հանքավայրի տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվել են 1949-1977թթ.-ի ընթացքում, ինչի նպատակով կատարվել է 3 հորիզոններում տեղադրված 13 բովանգքների հորատանցում (1267մ ընդհանուր խորությամբ), 6518մ³ առունների և 530զծ.մ. հետախուզահորերի անցում, 1969մ հորատանցքերի հորատում:

Կատարվել է հանքավայրի երեք տեղամասերից վերցրած համախառն նմուշների ուսումնասիրություն՝ նեֆելինային սիենիտների հարստացման տեխնոլոգիական սխեման պարզելու նպատակով:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ 21.06.1951թ.-ի N6903, 17.02.1959թ.-ի N 2597, 29.12.959թ.-ի N 2918 արձանագրություններով:

Հանքավայրի հաստատված պաշարների հենքի վրա 1970-ական թվականներին նախատեսվում էր Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատի կառուցումը: Սակայն 1978թ.-ին՝ շրջակա միջավայրի պահպանության նկատառումներից ելնելով, կոմբինատի շինարարությունը և, հետևաբար, հանքավայրի շահագործման աշխատանքները դադարեցվել են: Հանքավայրի տարածքում ստորգետնյա փորվածքների անցման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրագուրկ/լքված:



Նկար 32.



Վայոց ձորի մարզ

Վայոց ձորի մարզում ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի 4 տեղամասեր՝ Զանգակատան (Սովետաշենի), Վերնաշենի, Գլաձորի և Կաքավասարի (նկար 33):

ԶԱՆԳԱԿԱՏԱՆ (ՍՈՎԵՏԱՇԵՆԻ) ՏԵՂԱՄԱՍ (Վ-1)

Ընդերքօգտագործման թափոնների Զանգակատան (Սովետաշենի) տեղամասը գտնվում է Արարատի և Վայոց ձորի մարզերի սահմանագլխին, Զանգակատուն գյուղից մոտ 2,8կմ հյուսիս-արևելք Սպիտակ սարի (2260.0մ) լանջին (նկարներ 34-35, լուսանկարներ):

Ընդերքօգտագործման թափոնները առաջացել են 1968-1971թթ.-ին Սովետաշենի սնդիկի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության, նմուշարկման և տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հումքի արդյունահանման նպատակով ստորգետնյա լեռնային փորվածքների անցման արդյունքում: Տեղամասում անցել են 1889.3զծ.մ ստորգետնյա լեռնային փորվածքներ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցող առաջացումների ամբողջ համալիրը՝ դեռևս կրաքարերից մինչև վերին միոցենիանդեզիտաբազալտները սնդիկաբեր են: Սնդիկի առավել բարձր պարունակությունները դիտվում են սանիդին-տրախիտային կազմի էքստրուզիվ ապարներում, վերին էոցենյան ավազաքարերում, հիդրոթերմալ փոփոխված ապարների գոտիներում:

Տեղամասի հանքայնացումը ներկայացված են ձգված, խողովակաձև, ուսպնյակաձև 7 սնդիկաբեր հանքաբեր գոտիներով, որոնք հիմնականում տեղայնացված են հիդրոթերմալ փոփոխված ապարներում:

Երևակման տարածքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրազուրկ/լքված:

ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶ VAYOTS DZOR MARZ

Մարզկենտրոնը՝ ք. ԵՂԵԳՆԱԶՈՐ
3 քաղաք, 52 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝


Զանգակատան տեղամաս (Վ-1)

Վերնաշենի տեղամաս (Վ-2)

Գլաձորի տեղամաս (Վ-3)

Կաթավասարի տեղամաս (Վ-4)

YEGHEGNADZOR the center
3 cities 52 settlements
Instate roads 315km




Նկար 33.



Նկար 34.







Նկար 35.

ՎԵՐՆԱՇԵՆԻ ՏԵՂԱՄԱՍ (Վ-2)

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի Վերնաշեն տեղամասը գտնվում է Վերնաշեն գյուղից 3.5-4.0կմ հյուսիս-արևելք (նկար 36-37, լուսանկարներ):



Նկար 36.



Նկար 37.

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը կապված է Վերնաշենի կապար-ցինկի երևակման տարածքում 1951-1953թթ. ընթացքում օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության, նմուշարկման և տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հումքի արդյունահանման նպատակով ստորգետնյա լեռնային փորվածքների անցման արդյունքում: Տեղամասում անցել են ավելի քան 200 գծ.մ ստորգետնյա լեռնային փորվածքներ:

Վերնաշենի պղինձ-մոլիբդենի երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին եոցենի հասակի տուֆաավազաքարերը, տուֆիտները, պորֆիրիտները: Ինտրուզիվ առաջացումները ներկայացված են գրանոդիորիտներով և պորֆիրանման պլազիոգրանիտներով, ինչպես նաև անդեզիտային կազմի դայկաներով: Հանքներփակող ապարներն են հիդրոթերմալ փոփոխված տուֆաավազաքարերը, սիենիտո-գրանիտները և գրանոդիորիտները: Հանքայնացումը ներկայացված է հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան տարածման, կտրուկ անկմամբ երակներով, տարածված է նաև երակիկա-ցանային տիպը:



Երևակման տարածքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրազուրկ/լքված:


ԳԼԱԶՈՐԻ (ՂԱԶՄԱՅԻ) ՏԵՂԱՄԱՍ (Վ-3)

Ընդերքօգտագործման թափոնների Գլաձորի տեղամասը գտնվում է Եղեգնաձոր քաղաքից 12կմ հյուսիս-արևելք, Մալիշկա գյուղից 10կմ հյուսիս, Մալիշկա և Կորեկի-ձոր գետերի վերին հոսանքներում (նկար 39-40, լուսանկարներ):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը կապված է Գլաձորի բազմամետաղային հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, հումքի արդյունահանման արդյունքում:

Հանքավայրի տարածքում օգտակար հանածոների հետախուզման և արդյունահանման աշխատանքները սկսվել են դեռևս 1925 թվականից և շարունակվել մինչև 2009 թվականը, երբ «Վայք Ռեսուրս» ՍՊ կողմից կատարվել է Գլաձորի հանքային դաշտի տեղամասերի պաշարների հաշվարկ:

Հանքային դաշտի ուսումնասիրության, մետաղների կորզման տեխնոլոգիական սխեմայի մշակման նպատակով փորձնական արդյունահանման կատարման համար Գլաձորի բազմամետաղային հանքավայրի, Վերնաշենի, Ակունքի և Պռոշիբերդի երևակումների տարածքում անցել են ավելի քան 16կմ ստորգետնյա լեռնային փորվածքներ:





Նկար 39.



Նկար 40.





Հանքավայրի տարածքում ստորգետնյա փորվածքների անցման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են սիրագուրկ/լքված:

ԿԱՔԱՎԱՍԱՐԻ ՏԵՂԱՄԱՍ (Գ-4)


Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի Կաքավասար տեղամասը գտնվում է Սարավան գյուղից մոտ 2կմ հյուսիս-հյուսիս-արևելք (նկարներ 41-42, լուսանկարներ):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը կապված է Կաքավասարի հանքավայրի տարածքում օգտակար հանածոների ուսումնասիրության և կիսագործարանային պայմաններում տեխնոլոգիական փորձարկումների նպատակով փորձանական արդյունահանման հետ:

Հանքավայրում երկրաբանական ուսումնասիրությունները սկսվել են 1928թ.-ից, երբ որոնողական և հետախուզական փուլերի ընթացքում գնահատվել են կապարի և ցինկի արդյունաբերական պաշարները: 1985-88թթ.-ի և 1994-2001թթ.-ի ընթացքում կատարվել է հանքավայրի և հարակից տարածքների գունավոր և հազվագյուտ մետաղների ուսումնասիրություն, գնահատվել են դրանց կանխատեսումային ռեսուրսները:

Հանքավայրի լրահետախուզական աշխատանքները կատարվել են «Ասսաթ» ՍՊԸ կողմից 2008-2010թթ.-ի ընթացքում: Աշխատանքների արդյունքում հանքավայրում հաստատվել են հանքաքարի 82594տ, ոսկու 66.43կգ, արծաթի 36.91տ, կապարի 6395.89տ, ցինկի 3062.67տ և պղնձի 728.74տ հաշվեկշռային պաշարները: Գնահատվել են նաև արտահաշվեկշռային պաշարները, որոնք ըստ C_1+C_2 կարգերի կազմում են. հանքաքար 31063տ, ոսկի 21.12կգ, արծաթ 9.82տ, կապար 2115.39տ, ցինկ 1015.75տ և պղինձ 264.03տ:

Հանքավայրի տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին էոցենի հրաբխածին-պիրոկլաստիկ ապարների հորիզոնը և վերին օլիգոցենի մոնոցնիտային շարքի փոքր ինտրուզիաները, ինչպես նաև ժամանակակից և վերին չորրորդական փոխը-բեկորային առաջացումները:



Նկար 41.



Նկար 42.

Հանքավայրի տարածքում ստորգետնյա փորվածքների անցման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են սիրագուրկ/լքված:



ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Մյունիքի մարզում ուսումնասիրվել են հետևյալ ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի տեղամասերը և թափոնների փակված օբյեկտները (նկար 43).

- արտադրական լցակույտերի տեղամասեր.

Արևիսի տեղամաս

Սվարանցի տեղամաս

Նորաշենիկի տեղամաս

Նորաշենիկ-Հալաջ-Հաճանան տեղամաս

Ատկիզի տեղամաս

Կարմրաքարի տեղամաս

Մուլքի տեղամաս

Բողաքարի տեղամաս

Տերտերասարի տեղամաս

Արծվաբերդի տեղամաս

Թունդիրգետի տեղամաս

- փակված/լքված պոչամբարներ

Ողջիի

Փխրուտի

Դարազամիի

Արվաբերդի (ենթադրվող)

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ SYUNIK MARZ

Մարզկենտրոնը ԿՊՊԱՆ
7 քաղաք, 131 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների երկարությունը՝ 547կմ



Նկար 43.


ԱՐԵՎԻՍԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-1)

Ընդերքօգտագործման թափոնների Արևիս տեղամասը գտնվում է նույնանուն գյուղից մոտ 5կմ արևմուտք-հարավ-արևմուտք (նկարներ 44-45, լուսանկարներ):


Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը կապված է Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքային դաշտի սահմաններում 1959-1992թթ.-ին կատարված որոնողական և երկրաբանահետախուզական աշխատանքների հետ: Հանքային դաշտի տարածքում առանձնացված են բազմաթիվ հիդրոթերմալ փոփոխված, քվարցացված, սերիցիտիզացված ապարների գոտիներ, երկրորդային քվարցիտներ: Հանքային մարմինները ներկայացված են ոսկու և բազմամետաղների հանքայնացում կրող երակներով և երակային գոտիներով: Հանքային մարմիններին բնորոշ է հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան անկում՝ $60-85^\circ$ անկյան տակ:

Հանքավայրի տարածքը կազմված է միջին էոցենի հրաբխածին հաստվածքով՝ դացիտային, անդեզիտ-դացիտային պորֆիրիտներով և դրանց պիրոկլաստիկ տարատեսակներով:

Ընդհանուր առմամբ Մարջանի հանքային դաշտի սահմաններում՝ Մարջանի և Մազմազակի ոսկի-բազմամետաղային հանքերակումների տարածքում կատարվել է ավելի քան 15կմ ստորգետնյա փորվածքների անցում, որոնց հանքաբերանների հարակից հատվածներում կուտակված են զգալի քանակությամբ ընդերքօգտագործման թափոնների լցակույտեր:



Նկար 44.



Նկար 45.



Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերով զբաղեցրած տարածքները 2009թ.-ից ներառվել են «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊ ընկերությանը ՀԱ-Լ-411 հատուկ լիզենզիայով տրամադրված տարածքի մեջ: Համաձայն 19.08.2008թ.-ի N ԲՓ-86 շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական եզրակացության և 20.02.2009թ.-ի N 411 լիցենզային պայմանագրի «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊ ընկերությունը նախատեսում էր Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի (փաստացիորեն՝ երևակյա) կենտրոնական հատվածից և թևերից իրականացնել 60190տ հանքաքարի փորձնական արդյունահանում՝ վերամշակման տեխնոլոգիական ցուցանիշների որոշման նպատակով:

2013 թվականի մարտի 7-ի վերաձևակերպված N ՊՎ-398 ընդերքօգտագործման պայմանագրում որպես ընդերքօգտագործող նշվում է «Մարջան Մայնինգ Քոնփանի» ընկերությունը: Համաձայն վերաձևակերպված N ՊՎ-398 ընդերքօգտագործման պայմանագրի՝ ընկերությանը 2016 թվականի սեպտեմբերի 1-ից 3,4 տարի ժամկետով փորձնական բացահանքի անցման նպատակով հանձնվում է Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի (փաստացիորեն՝ երևակյա) 1, 2, 6, 6ա և 7 հանքային մարմինների վերին շերտերը մինչև 20մ խորությամբ: Նշված աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերացման՝ լցակույտերի մակերեսների ռեկուլտիվացման նպատակով ընկերությունը պարտավորվել է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարել 7853.0 հազ.դրամ (01.10.2018թ. դրությամբ վճարված է ընդամենը 1179.0հազ.դրամ):

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության և ընդերքօգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի՝ «Մարջան Մայնինգ Քոնփանի» ընկերությունը 1959-1992թթ.-ին ձևավորված լցակույտերի ռեկուլտիվացիայի մասով որևէ պարտավորություններ չի կրում:

01.10.2018թ.-ի դրությամբ Արևիս գյուղից մոտ 5կմ հեռավորության վրա գտնվող ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը համարվում են տիրազուրկ/լքված:

Միաժամանակ, «Մարջան Մայնինգ Քոնփանի» ընկերության N ՊՎ-398 ընդերքօգտագործման պայմանագրի հավելված 2-ի «Հատուկ պայման»-ին

համաձայն, ընկերությունը պարտավորվում է հանքավայրի պաշարների վերահաստատումից հետո մշակել հանքավայրի շահագործման նոր նախագիծ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման 19.08.2008թ.-ի N ԲՓ-86 փորձաքննական եզրակացության փորձաքննական պահանջներով նույնպես ամրագրված է նոր աշխատանքային նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնելու պահանջը: Որպես փորձաքննական պահանջ նախատեսված է նաև «Հետախուզվող հանքի պաշարները չվերագնահատելու դեպքում, տարածքի (հանքավայր, լցակույտ և այլն) վերակուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերը, անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության»:

Մարջանի ոսկի-բազմամետաղային հանքային դաշտի սահմաններում 1959-1992թթ.-ին կատարված որոնողական և երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում ձևավորված ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ռեկուլտիվացիայի խնդիրը նպատակահարմար է քննարկել վերը նշված նոր աշխատանքային ծրագրի կամ տարածքի (հանքավայր, լցակույտ և այլն) վերակուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերի շրջանակներում:




Նկար 47.



ՆՈՐԱՇԵՆԻԿԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-3)

Ընդերքօգտագործման թափոնների Նորաշենիկի տեղամասը գտնվում է նույնանուն գյուղի մոտ (նկար 48-49, լուսանկարներ): Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերն առաջացել են Կապանի պղնձի հանքավայրի շարունակություն հանիսացող Նորաշենիկի երևակման տարածքում իրականացված երկրաբանական ուսումնասիրության, հանքաքարի փորձնական արդյունահանման աշխատանքների արդյունքում:

Նորաշենիկի տեղամասը կազմված է միջին-յուրայի քվարց-պլագիոկլազային պորֆիրիտներով և նստվածքային ապարներով: Տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կատարվել են սկսած 19-րդ դարի վերջից, երբ տեղամասում անցել են N1, 2, 3, 5, 5a, 6 և 7 բովանցքերը՝ ընդհանուր 1276մ երկարությամբ: Հանքաքարը երակիկա-ներփակումնային, պիրիտ-խալկոպիրիտային կազմի են:



Նկար 48.



Նկար 49.



ՆՈՐԱՇԵՆԻԿ-ՀԱԼԱԶ-ՀԱՃԱՃԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԼՑԱԿՈՒՅՏԵՐ (Մ-4)

Հանրապետական նշանակության Հ-46 (Մ2 - Տաթև - Աղվանի - Կապան - Մ2) ավտոճանապարհի Նորաշենիկ-Հալաջ-Հաճանան հատվածում ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոնների 5 լցակույտ: Դրանց առաջացումը կապված է Կապանի պղնձի հանքավայրի N1 (Պերևալի) և N6 տեղամասերում իրականացված հետախուզական աշխատանքների արդյունքում:

Երկրաբանական ուսումնասիրության, արդյունահանման աշխատանքները հանքավայրի և հարակից տեղամասերի տարածքում իրականացվել են սկսած 1843թ.-ից, ինչի արդյունքում կատարվել է շուրջ 2կմ ստորգետնյա լեռնային փորվածքների անցում:

Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ուսումնասիրության աշխատանքների կատարման տեղամասն ամիջապես հարում է «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործման նպատակով 27.11.2012թ.-ի ՆՇԱԹՎ-29/183 ընդերքօգտագործման իրավունքով սահմանազատված տարածքի հետ: Դիտարկված լցակույտերից 2-ը ներառված են «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ լեռնահատկացման ակտի սահմաններում, 3-ը՝ դուրս են, հետևաբար 01.10.2018թ.-ի դրությամբ համարվում են լքված/տիրագուրկ (նկար 50 և 51, լուսանկարներ):



Նկար 50.



«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի ստորգետնյա եղանակով արդյունահանման նախագծի 08.11.2011թ.-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական N ԲՓ-103 եզրակացության մեջ որպես փորձաքննական պահանջ ներառված է ռեկուլտիվացիայի նախագծի մշակումը: Ուսումնասիրված լքված լցակույտերի ռեկուլտիվացիայի խնդիրը նպատակահարմար է քննարկել վերը նշված ռեկուլտիվացիայի շրջանակներում:

ՈՂՋԻԻ ՓԱԿՎԱԾ ՊՈՉԱՄԲԱՐ (Մ-5)

Ողջիի պոչամբարը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում Լեռնաձոր գյուղի մոտ: Շահագործման է հանձնվել 1962թ.-ի, կոնսերվացվել է 1977թ.-ի (նկար 52, լուսանկարներ):


Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացված տվյալների՝ պոչամբարի նախագծային ծավալը կազմում էր 30մլն.մ³, կուտակված է 10մլն.մ³ ընդերքօգտագործման թափոններ: Ըստ լցման ձևի պոչամբարը պատկանում է լագային տիպին: Պոչամբարի զբաղեցրած մակերեսը 53 հա է:

Պատվարի նախագծային բարձրությունը եղել է 112մ, փաստացին՝ 100մ, պատվարը կառուցված է քարալիցքային և կավային նյութերով:


ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 28-ի նիստի N 13-18 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի շրջանակներում մի խումբ մասնագետների կողմից կատարվել են 11 պոչամբարների վտանգավորության գնահատում՝ ըստ հետևյալ ցուցանիշների.

1. կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալը,
2. ազգաբնակչությանը վնասակար ազդեցության գոտում,
3. ազդեցության գոտում առակա հողային ռեսուրսները
4. պոչամբարի կարգավիճակը,
5. պոչամբարի կառուցվածքային առանձնահատկությունները,
6. վնասակար տարրերի պարունակությունը,
7. օգտակար բաղադրիչների պարունակությունը,
8. վնասակար ազդեցության կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման հնարավորություն,
9. կուտակված թափոնների փոշիացման աստիճանը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով Ողջիի կոնսերվացված պոչամբարը դասվել է վտանգավորության 2-րդ դասին (առավելագույնը՝ 3-րդ դաս):



Նկար 52.



Պոչամբարի տակ Ողջի գետի հունը փոխելու համար կառուցվել է 1 կմ երկարությամբ ջրատար : Ջրատարի վրա կառուցվել է փոքր հզորությամբ հիդրոկայան (2 Մտվ):



Ստեղծված են դրենաժային համակարգեր՝ մակերևութային ջրերի հեռացման հեղեղումների կառավարման համար, որոնք ներկայումս գործում են:



ՓԽՐՈՒՏԻ ՓԱԿՎԱԾ ՊՈՉԱՄԲԱՐ (Մ-6)

Փխրուտի պոչամբարը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում Լեռնաձոր համայնքի վարչական տարածքում՝ Փխրուտ գյուղի մոտ (նկար 53, լուսանկարներ): Շահագործման է հանձնվել 1958թ.-ի, կոնսերվացվել է 1969թ.-ի:



Նկար 53.



Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացված տվյալների՝ պոչամբարի նախագծային ծավալը կազմում էր 3.2մլն.մ³: Փաստացի պոչամբարում կուտակված է 3.2մլն.մ³ ընդերքօգտագործման թափոններ: Ըստ լցման ձևի պոչամբարը պատկանում է լազային տիպին:

Պատվարի նախագծային բարձրությունը եղել է 50մ, փաստացին՝ 46մ: Պոչամբարի զբաղեցրած մակերեսը 11.2 հա է:

Պատվարը կառուցված է քարալիցքային նյութով:

ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 28-ի նիստի N 13-18 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի շրջանակներում մի խումբ մասնագետների կողմից կատարվել են 11 պոչամբարների վտանգավորության գնահատում՝ ըստ հետևյալ ցուցանիշների.

1. կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալը,
2. ազգաբնակչությանը վնասակար ազդեցության գոտում,
3. ազդեցության գոտում առակա հողային ռեսուրսները,
4. պոչամբարի կարգավիճակը,
5. պոչամբարի կառուցվածքային առանձնահատկությունները,
6. վնասակար տարրերի պարունակությունը,
7. օգտակար բաղադրիչների պարունակությունը,
8. վնասակար ազդեցության կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման հնարավորություն,
9. կուտակված թափոնների փոշիացման աստիճանը:

Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով Փխրուտի կոնսերվացված պոչամբարը դասվել է վտանգավորության 2-րդ դասին (առավելագույնը՝ 3-րդ դաս):

Պոչամբարի շուրջ կան ջրանցքներ, որոնց մաքրումը և սպասարկումը կատարվում է կանոնավոր կերպով՝ դրանց ֆունկցիոնալությունն ապահովելու համար: Պոչամբարի տակով անցնում է ջրահեռացման համակարգ, որի ելքը դուրս է գալիս պոչամբարի ստորին հատվածում: Այդ ջրատարով հոսում են նաև վտակի ջրերը, որի հունում կառուցված է պոչամբարը: Ջրատարը ներկայումս գործում է:



Պոչամբարում կառուցվել են ամառանոցներ, տնկվել այգիներ: Չափավոր բուսականությամբ ծածկված մակերեսին կովեր են արածում: Պոչամբարը ցանկապատված չէ և այն սահուն ձևով միանում է շրջակայքին:

ԴԱՐԱԶԱՄԻ (ԴԱՐԱԶՈՐԻ) ՓԱԿՎԱԾ ՊՈՉԱՄԲԱՐ (Ս-7)

Դարազամի պոչամբարը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Քաջարան և Լեռնաձոր համայնքների միջև՝ Ողջի գետի աջակողմյան՝ Դարավի (նախկինում՝ Դարազամի) վտակի վրա (նկար 54, լուսանկարներ): Շահագործման է հանձնվել 1953թ.-ի, կոնսերվացվել է 1961թ.-ի:



Նկար 54.

Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացված տվյալների՝ պոչամբարի նախագծային ծավալը կազմում էր 3.0մլն.մ³: Փաստացի պոչամբարում կուտակված է 3.0մլն.մ³ ընդերքօգտագործման թափոններ: Ըստ լցման ձևի պոչամբարը պատկանում է լազային տիպին:

Պատվարի նախագծային բարձրությունը եղել է 60մ, փաստացին՝ 58մ: Պոչամբարի զբաղեցրած մակերեսը մոտ 0.9 հա է (ըստ Հարավային ջրավազանային կառավարման պլանի տվյալների, էջ 122, 2015թ.):

Պատվարը կառուցված է քարալիցքային նյութով:

Ուսումնասիրությունների իրականացման պահին պոչամբարի վրա աճեցվում են մշակաբույսեր և արածում են ընտանի կենդանիներ: Կան նաև բազմաթիվ բանջարանոցներ:



ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 28-ի նիստի N 13-18 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի շրջանակներում մի խումբ մասնագետների կողմից կատարվել են 11 պոչամբարների վտանգավորության գնահատում՝ ըստ հետևյալ ցուցանիշների.

1. կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալը,
2. ազգաբնակչությանը վնասակար ազդեցության գոտում,
3. ազդեցության գոտում առակա հողային ռեսուրսները
4. պոչամբարի կարգավիճակը,
5. պոչամբարի կառուցվածքային առանձնահատկությունները,
6. վնասակար տարրերի պարունակությունը,
7. օգտակար բաղադրիչների պարունակությունը,
8. վնասակար ազդեցության կանխարգելման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման հնարավորություն,
9. կուտակված թափոնների փոշիացման աստիճանը:


Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով Դարագամի կոնսերվացված պոչամբարը դասվել է վտանգավորության 2-րդ դասին (առավելագույնը՝ 3-րդ դաս):

ԱՏԿԻՉԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-8)


Ընդերքօգտագործման թափոնների Ատկիզ տեղամասը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 1կմ հյուսիս (նկարներ 55-56, լուսանկարներ):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների առաջացումը կապված է Ատկիզի երևակյան տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման աշխատանքների արդյունքում: Հանքերևակումը հայտնի է 1850-ական թվականներից: Առավել հարուստ հանքային մարմիններից պղինձն ու կապարն արդյունահանվել են անհատների կողմից:

Կանոնակարգված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացվել են 1931-32թթ., 1950-ական թվականների («Սվինեց-ռազվեդկա» տրեստ) և 1981-83թթ.-ին: 1931-32թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքներով գնահատվել են կապարի և պղնձի հեռանկարային ռեսուրսներ:



Նկար 55.



Նկար 56.



ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-9)

Ընդերքօգտագործման թափոնների Կարմրաքարի տեղամասը գտնվում է Քաջարան քաղաքից մոտ 12.5կմ հեռավորության վրա, Լիճք գյուղից մոտ 5կմ հյուսիս-հյուսիս-արևելք՝ Քաջարան-Մեղրի միջպետական ավտոճանապարհի ձախ կողմում (նկար 57-58, լուսանկարներ):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ձևավորումը կապված է Կարմրաքարի տեղամասում 1953-1980թթ.-ին իրականացված ոսկու և կապարի հանքայնացման երկրաբանական ուսումնասիրության, տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հանքաքարի արդյունահանման աշխատանքների հետ:

Հանքերփակող ապարները ներկայացված են միոցենի հասակի թթու կազմի ինտրուզիվ առաջացումներով (մոնցոնիտ, գրանոդիորիտ, գրանիտ, դիորիտ և այլն): Տեղամասում հետախուզված 10 երակային մարմիններում գնահատվել են ոսկու, արծաթի, կապարի, զինկի, պղնձի և մոլիբդենի կանխատեսումային ռեսուրսներ:

Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում դիտարկվել են ԽՍՀՄ տարիներին կատարված երկրաբանական ուսումնասիրության արդյունքում առաջացած 4 լցակույտ:

Դրանցից 2-ը ներկայումս ներառված են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 16.01.2015թ.-ին «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊ ընկերությանը տրամադրված N 514 ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում (գործողության ժամկետը՝ մինչև 24.06.2022թ.):


«ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊ ընկերության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն անցած աշխատանքային նախագծով (ԲՓ-84 18.11.2014թ.)՝ ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնման նպատակով նախատեսվում է ռեկուլտիվացնել ժայռային ապարների արտաքին լցակույտը, N1 և N2 բացահանքերում պահեստավորված ապարների մակերևույթները: ԽՍՀՄ տարիներին իրականացված երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ռեկուլտիվացիա «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊ ընկերությունը չի նախատեսում:



Նկար 57.



Նկար 58.



01.10.2018թ.-ի դրությամբ Կարմրաքարի տեղամասի ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը դիտարկվում են որպես տիրագուրկ/լքված: Դրանց ռեկուլտիվացիայի հարցը հնարավոր է քննարկել «ԱՏ-ՄԵՏԱԼՍ» ՍՊ ընկերության կողմից Մեղրասարի ոսկու հանքավայրի փակման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման ժամանակ:

ՄՈՒԼՔԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-10)


Ընդերքօգտագործման թափոնների Մուլքի տեղամասը գտնվում է Լիճք գյուղից 2կմ հարավ-հարավ-արևմուտք, Մուլք լքված գյուղի ավերակներից 500-800մ հյուսիս (նկար 59-60):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի ձևավորումը կապված է պղինձ-մոլիբդենային հանքայնացման բնույթի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների, տեխնոլոգիական փորձարկումների նպատակով հանքաքարի արդյունահանման աշխատանքների հետ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է քվարցային դիորիտներով, պորֆիրանման գրանոդիորիտներով, հիդրոթերմալ փոփոխված, սերպենտինիզացված, քվարցացված, քլորիտացված և երակիկա-ցանային հանքայնացում պարունակող գրանոդիորիտ-պորֆիրներով:

Սկսած 1948թ.-ից տեղամասի սահմաններում անցել են ավելի քան 3140մ ստորգետնյա լեռնային փորվածքներ: 1958թ.-ին երևակման տարածքում աշխատանքները դադարեցվել են, երևակումը համարվել է ոչ հեռանկարային, ինչը պայմանավորված էր մետաղների ցածր պարունակությամբ:

2012-2017թթ.-ին տեղամասի տարածքում (Խաչաքար-Փարավանի հանքային դաշտի սահմաններ) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման թույլտվություն էր տրամադրվել «Մթորթրանս» ՍՊ ընկերությանը: Ընկերության ծրագրում որպես բնապահպանական միջոցառում նախատեսված էր իր գործունեության շրջանակներում անցած հետախուզատունների, հետախուզահորերի և հորատման հարթակների վերականգնում, որի համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսվում էր հատկացնել 850.0հազ.դրամ: Սակայն 01.01.2016թ.-ի դրությամբ ընկերությունը հրաժարվում է ընդերքօգտագործման թույլտվությունից, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից ստանալով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հրաժարման հավաստագիր: Արդյունքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին «Մթորթրանս» ՍՊ ընկերությանը հատկացվում է միայն 361.0հազ.դրամ:



Նկար 59.




Նկար 60.

ԲՈՂԱՔԱՐԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-11)

Ընդերքօգտագործման թափոնների Բողաքարի տեղամասը գտնվում է Այգեձոր գյուղից 2.5կմ արևմուտք-հյուսիս-արևմուտք, «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի «Արևիք» ազգային պարկի տարածքում (նկար 61-62, լուսանկարներ):

Բողաքարի տեղամասի ընդերքօգտագործման թափոններն առաջացել են Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և հանքաքարի տեխնոլոգիական ուսումնասիրության նպատակով ստորգետնյա փորվածքների անցման արդյունքում: Հանքավայրի տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացվել են 1962-1986թթ.-ի, ինչի արդյունքում կատարվել է շուրջ 20կմ ստորգետնյա լեռնային փորվածքների անցում:

Ներկայումս Բողաքարի տեղամասի տարածքը չի հանդիսանում ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնված տարածք, տեղամասում ուսումնասիրված ընդերքօգտագործման թափոնները դիտարկվում են որպես սիրագուրկ/լքված:



Նկար 61.




Նկար 62.



ՏԵՐՏԵՐԱՍԱՐԻ ՏԵՂԱՄԱՍ (Ս-12)


Ընդերքօգտագործման թափոնների Տերտերասար տեղամասը գտնվում է Թիսկուտ գյուղից մոտ 3.8կմ հյուսիս և Լիճք գյուղից մոտ 5կմ հարավ-արևելք (նկար 63-64): Ընդերքօգտագործման թափոնների առաջացումը տեղամասում կապված է 1978-2015թթ.-ի ընթացքում Տերտերասարի ոսկու հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության և հանքաքարի արդյունահանման աշխատանքների հետ:



Նկար 63.

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Մեղրու ինտրուզիվ զանգվածի ներդրման II և IV փուլի ապարները՝ գաբրոներ, գրանոդիորիտներ, գրանիտներ, ինչպես նաև միջին եոցենի հասակի պորֆիրիտներ:

Տերտերասարի ոսկու հանքավայրի տարածքում արդյունահանման աշխատանքները իրականացվել են 1999-2016 թվականներին «Միփան-1» ՍՊ ընկերության կողմից (ՀԱ-Լ-14/34 18.11.2003թ., ՇԱԹՎ-385 25.02.2013թ., գործողության ժամկետը՝ մինչև 24.11.2024թ.): Համաձայն «Միփան-1» ՍՊ ընկերության աշխատանքային նախագծի վերաբերյալ 06.10.2003թ.-ին տրված ԲՓ-93 շրջակա



Նկար 64.

միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության՝ ընկերությունը նախատեսում է աշխատանքների ավարտից հետո կատարել մակաբացման ապարների լցակույտերի ռեկուլտիվացիա: Ռեկուլտիվացիոն աշխատանքների

կատարման նպատակով ընկերությունը շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսել է հատկացնել 6120.93հազ.դրամ:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Սիփան-1» ՍՊ ընկերության Տերտերասարի ոսկու հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է: Դադարեցման/հրաժարման գործընթացն իրականացվել է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված ընթացակարգերի խախտմամբ: 01.01.2016թ.-ի դրությամբ ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացվել է 4634.69հազ.դրամ:

Տերտերասարի ոսկու հանքավայրի տարածքում առկա լցակույտերը, որոնք ձևավորվել են երկրաբանական ուսումնասիրության և հանքաքարի արդյունահանման արդյունքում, հնարավոր է ռեկուլտիվացնել ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշման ընթացակարգերին համաձայն՝ «Սիփան-1» ՍՊ ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացված միջոցներով:


ԱՐԾՎԱԲԵՐՂԻ ՏԵՂԱՄԱՍ (Մ-13)

Ընդերքօգտագործման թափոնների Արծվաբերդ տեղամասը գտնվում է Վարդանիձոր գյուղից 12կմ արևմուտք, Բողաքար գետի վերին հոսանքներում՝ 1900-2700մ բացարձակ բարձրությունների վրա (նկար 65-67, լուսանկարներ):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնները առաջացել են Արծվաբերդի պղնձի երևակման երկրաբանական ուսումնասիրության և տեխնոլոգիական ուսումնասիրությունների նպատակով հանքաքարի արդյունահանման հետևանքով:



Նկար 65.



Նկար 66.

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Մեղրու պլուտոնի ինտրուզիվ ապարները՝ մոնցոնիտները, դիաբազային պորֆիրիտների քսենոլիտների ներփակումներ պարունակող գրանոսիենիտները, գրանիտները, պորֆիրանման գրանիտները, գրանոդիորիտները; Տարածված են հիդրոթերմալ փոփոխված ապարներ, հիդրոթերմալ փոփոխությունը ներկայացված է քվարցացմամբ, քլորիտացմամբ, կաոլինիզացմամբ, էպիդոտացմամբ:

Տեղամասի տարածքում 1950-1964թթ. ընթացքում անցել են ավելի քան 2636 գծային մետր ստորգետնյա լեռնային փորվածք, 8200ի.մ. առուներ և 733գծ.մ հետախուզահորեր:

Բացի հետախուզական փորվածքների անցումից, 1963 թվականին հանքերևակման տարածքում՝ հանքաքարի հարստացման տեխնոլոգիական սխեմայի մշակման նպատակով կատարվել են փորձնական արդյունահանման և վերամշակման աշխատանքներ:

2018 թվականի հուլիս և հոկտեմբեր ամիսներին կատարված դաշտային տեղագնումների արդյունքում ուսումնասիրվել է միայն մեկ լցակույտ, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ փորվածքների և արտադրական լցակույտերի գերակշռող մասը գտնվում է Հայաստանի Հանրապետություն-Ադրբեջանի Հանրապետություն-Նախիջևան սահմանին մոտ՝ ադրբեջանական գորքերի դիրքերի կրակային վերահսկման գոտում:

Սակայն ըստ Google Earth աշխարհագրական ինֆորմացիոն համակարգից ներբեռնված պատկերների՝ Արծվաբերդի տեղամասում ենթադրաբար առկա է մետաղական օգտակար հանածոյի վերամշակման արդյունքում ձևավորված թափոնների օբյեկտ (նկար 67): Ընդ որում օբյեկտը տեղաբաշխված է «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի «Արևիք» ազգային պարկի տարածքում:

Սույն հաշվետվությունը հանդիսանում է բնապահպանության նախարարության կողմից նախաձեռնած ընդերքօգտագործման թափոնների գույքագրման աշխատանքների առաջին փուլ և կրում է շարունակական բնույթ: Հաջորդ տարվա աշխատանքների ցանկում խիստ անհրաժեշտ է ընդգրկել Արծվաբերդի տեղամասի մանրակրկիտ ուսումնասիրությունը՝ ՀՀ ԶՈւ աջակցությամբ ապահովելով նախարարության մասնագետների անվտանգությունը:



Նկար 67.



ԹՈՒՆԴԻՐԳԵՏԻ ՏԵՂԱՄԱՍ (Ս-14)


Ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի Թունդիրգետի տեղամասը գտնվում է Նոնաձոր գյուղից մոտ 7.5կմ արևելք (նկար 68-69, լուսանկարներ):

Տեղամասում ընդերքօգտագործման թափոնների լցակույտերը ձևավորվել են 1964-1970, 1980-82 և 2008-2012թթ.-ին կատարված որոնողահանույթային, որոնողական, երկրաբանական աշխատանքների արդյունքում: Տեղամասում ձևավորված ընդերքօգտագործման թափոնների ցակույտերը կապված են ԽՍՀՄ տարիներին կատարված աշխատանքների հետ: 2008-2012թթ.-ի երևակման տարածքում աշխատանքներ են իրականացվել «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ կողմից՝ միայն մակերևութային փորվածքների անցում: 2014-2017թթ.-ի ընթացքում տեղամասը ներառվել է «ԳԵՈ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ կողմից ՀՀ Սյունիքի մարզի Ալվանք-Նոնաձորի ոսկի-բազմամետաղների հանքերակման ուսումնասիրության համար նախատեսված տարածքի մեջ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին դևոն-ստորին կարբոնի, կավճի հասակի հրաբխանստվածքային տերիգեն-նստվածքային և կարբոնատային ապարներով:



Նկար 68.



Նկար 69.



Թունդիրգետի տեղամասին հարակից տարածքները ականապատ են, այդ իսկ պատճառով 2018 թվականի ամռանը կատարված դաշտային տեղագնումների ժամանակ՝ ելնելով բնապահպանության նախարարության աշխատակիցների անվտանգությունից, ուսումնասիրվել է ընդերքօգտագործման թափոններով զբաղեցրած տարածքների փոքր մասը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծման նպատակով 2018 թվականի երկրորդ և երրորդ եռամսյակներում կատարված դաշտային ուսումնասիրություններ են իրականացվել Լոռու, Արագածոտնի, Կոտայքի, Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում:

Ուսումնասիրվել են ընդերքօգտագործման թափոններով զբաղեցրած 44 լքված/տիրագուրկ տարածքներ և 5 փակված պոչամբար:

Ստացված տեղեկատվական բազայի ամփոփման արդյունքները թույլ են տալիս ամրագրել հետագա գործողությունների նախնական ընդհանրական ծրագիր, ինչը նպատակաուղղված պիտի լինի շրջակա միջավայրի և ազգաբնակչության առողջության և անվտանգության համար առավել վտանգավոր տեղամասերի սահմանազատմանը, դրանց տարածքներում ուսումնասիրությունների կատարմանը, բացասական ազդեցությունների չեզոքացմանն ու ռիսկերի կանխմանը:

Ստորև ներկայացվում է գործողությունների ընդհանրական ծրագրի նախնական կառուցվածքը:

Գործողություն 1. Շրջակա միջավայրի և ազգաբնակչության առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրագուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների ազդեցությունների գնահատականը տալու նպատակով անհրաժեշտ է կատարել մանրակրկիտ մոնիթորինգային աշխատանքներ՝ հետազոտելով շրջակա միջավայրի բոլոր բնական բաղադրիչների (ջուր, մթնոլորտ, հող, բուսականություն, սննդային շղթաներ) փաստացի աղտոտվածությունը: Ընդ որում, որպես առաջնահերթություն պետք է դիտարկվեն ընդերքօգտագործման թափոններով զբաղեցված այն տեղամասերը կամ ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտները, որոնք գտնվում են բնակավայրերի անմիջական հարևանությամբ՝ օրինակ արտադրական լցակույտերի Ալավերդու (Մադանի) տեղամաս, Տանձուտի տեղամաս, Դարագամի (Դարաձոր) և Փխրուտ փակված պոչամբարներ:

Գործողություն 2. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ քննարկել կոնկրետ հանքավայրերի կոնսերվացման, մնացորդային պաշարների դուրս գրման հարցերը (օրինակ՝ Ալավերդու պղնձի, Ախթալայի պղինձ-բազմամետաղային, Տանձուտի պղինձ-կոլչեդանային հանքավայրեր):

Գործողություն 3. Չափագրել կենսաբանական մաքրման, վերականգման ենթակա տարածքները, ինչը թույլ կտա ստանալ փաստացի տվյալներ ռեկուլտիվացիոն/վերականգնողական ծրագրերի մշակման համար:

Գործողություն 4. Մշակել և իրականացնել տեղայնացված, կոնկրետ ռեկուլտիացիայի ծրագրեր, որոնք պետք է արտացոլեն յուրաքանչյուր տեղամասի/օբյեկտի բնակլիմայական, ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները, չեզոքացման ենթակա աղտոտվածության բնույթը, տարածաշրջանի տնտեսական զարգացման և ռեկուլտիվացվող տարածքների տնտեսական յուրացման հեռանկարները և այլն:

Գործողություն 5. Մանրակրկիտ ուսումնասիրել հատկապես անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքներում գտնվող ընդերքօգտագործման թափոնների լցակույտերի/պոչամբարի (Բողաքարի տեղամաս, Տանձուտի տեղամաս, Արծվաբերդի տեղամաս, Արևիսի տեղամաս և այլն) տարածքներում՝ հետազոտության առարկա դարձնելով տեխնածին աղտոտվածության բնույթի բացահայտումը, անտառածածկ/բնության հատուկ պահպանվող տարածքներով աղտոտվածության միգրացիայի հնարավոր ուղղությունները: Շահագրգիռ մասնագիտացված կազմակերպությունների (բնապահպանության նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներ, բնության հատուկ պահպանվող տարածքների սպասարկումը և պահպանությունն ապահովող պետական ոչ առևտրային կազմակերպություններ, Անտառային կոմիտե) հետ քննարկել բացասական ազդեցությունների նվազեցման/ չեզոքացման գործողությունների ծրագրերը:

Գործողություն 6. Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացումից հետո նախատեսել շրջակա միջավայրի երկարաժամկետ մոնիթորինգային ծրագիր, ինչը թույլ կտա հավաստել իրականացված աշխատանքների արդյունավետությունը և կանխել բոլոր հնարավոր բնապահպանական ռիսկերը: